ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՀՀ ք.Երևան, Շիրակի 88/1
Հեռ. +37441-777-983
Էլ. հասցե՝ easm.himnark@gmail.com

Ալ - 380

«27» դեկտեմբեր 2024թ.

«Ալեռտո» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Ծանուցում
(Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի՛ գործընկեր,

Տեղեկացնում եմ, որ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի (այսուհետ՝ Գնորդ) և «Ալեռտո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2024 թվականին նոյեմբերի 12-ին կնքած ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/55-1 ծածկագրով գնման պայմանագրի (Համաձայնագիր կնքած՝ 21.11.2024թ.) կատարման վերջնաժամկետը լրացել է 12.12.2024թ.-ին: Համաձայն «Ալեռտո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության՝ 17.12.2024թ. Ընկերությունը հրաժարվում է մատակարարել 1-3 չափաբաժիններով նախատեսված ապրանքները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն *չկատարելը* կամ *անպատշաճ* (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Տեղեկացնում եմ, որ ԵԱՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/55-1 ծածկագրով գնման պայմանագրի մասով Ընկերությունը պարտավոր է Պայմանագրի 6.5 կետի համաձայն վճարել տուգանք պայմանագրի չմատակարարված ապրանքների գնի 0,05 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ 6047 (վեց հազար քառասունյոթ) ՀՀ դրամ, սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000698 հաշվեհամարին:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը 128000 (մեկ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովումը 193200 (մեկ հարյուր ինսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ հառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆ